ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2025 թվականի N 363-Ա

«ՏՈՐՈՒՆԻՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆՈՒՇ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏՈՐ ՀԵՐՄԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Տորունիքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մելքոմյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. «Տորունիքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Մելքոմյանին 2025 թվականի օգոստոսի 1-ից 22-ը ներառյալ տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 16 աշխատանքային օր:

2. Ա. Մելքոմյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Տորունիքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության օպերատոր Հերմինե Ալեքսանյանին:

25.07.2025

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025թ. հուլիսի 25
ք.Կապան